# Պարտատոմսեր

*Համառոտ տեղեկություն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ*

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

# Բովանդակություն

**Թողարկված պարտատոմսերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** **1**

**Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան փբը-ի համառոտ նկարագրություն** **3**
Վերջին ժամանակաշրջանի մրցանակներ 4

**Էյչ-Էս-Բի-Սի Խումբ** **5**
Վարկանիշեր 7
Վերջին ժամանակաշրջանի մրցանակներ 7

**Վերլուծական տեղեկատվություն** **9**
Հայաստանի Հանրապետություն – Տնտեսության և
բանկային համակարգի հիմնական ցուցանիշներ 9
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
գործունեության վերաբերյալ տեղեկատվություն 11

**Ինչու՞ ներդնել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից**
**թողարկված պարտատոմսերում** **16**

# Թողարկված պարտատոմսերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

| | |
|---|---|
| Դասը | Անվանական, արժեկտրոնային, չփոխարկվող պարտատոմսեր |
| Ձևը | Ոչ փաստաթղթային |
| Քանակը | 10,000 (տաս հազար) |
| Մեկ պարտատոմսի անվանական արժեքը | 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ |
| Տեղաբաշխման գինը | Պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքով |
| Թողարկման ընդհանուր ծավալը | 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ |
| Տարեկան եկամտաբերությունը | 9 (ինը) տոկոս |
| Բաժանորդագրության սկիզբը | 16 դեկտեմբերի 2008 |
| Բաժանորդագրության ավարտը | 10 հունվարի 2009 թվականին. Պարտատոմսերի բաժանորդագրությունների քանակը 10,000 (տաս հազար) հատը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է պարտատոմսերի բաժանորդագրությունը: |
| Տեղաբաշխման սկիզբը | 11 հունվարի 2009 |
| Տեղաբաշխման ավարտը | 13 հունվարի 2009 |
| Ցուցակում | Պարտատոմսերը կցուցակվեն Հայաստանի ֆոնդային բորսայում |

- Պարտատոմսերի բաժանորդագրությունը և դրանց դիմաց վճարումները կատարվում են միաժամանակ և ամբողջությամբ՝ Բանկի գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում, և կուտակվում են Բանկում այդ նպատակով բացված **217072925605001** հաշվեհամարին:
- Բաժանորդագրությանը կարող են մասնակցել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
- Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել բաժանորդագրության ժամկետի

ընթացքում՝ երկուշաբթիից ուրբաթ օրերին ժամը 09:30-18:00-ը և շաբաթ օրերին ժամը 10:00-14:00-ը բանկի գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում՝ հետևյալ հասցեներով

| | |
|---|---|
| ▸ Գլխավոր գրասենյակ | Տերյան փողոց 66, Երևան 0009, ՀՀ |
| ▸ Հանրապետության հրապարակ մասնաճյուղ | Վազգեն Սարգսյան փողոց 9, Երևան 0010, ՀՀ |
| ▸ Կոմիտաս մասնաճյուղ | Կոմիտաս պողոտա 3, Երևան 0033, ՀՀ |
| ▸ Տիգրան Մեծ մասնաճյուղ | Տիգրան Մեծ պողոտա 31ա, Երևան 0018, ՀՀ |
| ▸ Զեյթուն մասնաճյուղ | Ներսիսյան փողոց 1, Երևան 0014, ՀՀ |
| ▸ Գարեգին Նժդեհ մասնաճյուղ | Բագրատունյաց պողոտա 14, Երևան 0039, ՀՀ |
| ▸ Նոր Նորք մասնաճյուղ | Գայի պողոտա 19/10, Երևան 0062, ՀՀ |

- Պարտատոմսերի մարումը կկատարվի Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից 13 հունվարի 2010թ.-ին:
- Պարտատոմսերի հաշվառումը, սեփականության և այլ գույքային իրավունքների գրանցումը կարող է իրականացվել ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կամ օրենքով սահմանված կարգով լիցենզավորված այլ պահառուի կողմից
- Պարտատոմսերի գրանցված սեփականատերերին պարտատոմսերի դիմաց վճարումը կիրականացվի պարտատոմսերի մարմանը հաջորդող աշխատանքային օրը:
- Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) պատկանող պարտատոմսերը երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

# Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան փբը-ի համառոտ նկարագրություն

| | |
|---|---|
| **Մեր մասին** | Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն առաջինն էր միջազգային բանկերից, որ հիմնադրվեց Հայաստանում 1996թ.-ին: Բանկի բաժնետոմսերի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ մնացած 30%-ը` սփյուռքահայ ներդրողներին: |
| **Մեր առավելությունը** | ▸ Առաջնակարգ սպասարկման, ծառայությունների և լուծումների շնորհիվ հաճախորդների սպասարկման լավագույն մակարդակի ապահովում:<br>▸ Մեր բաժնետերերի համար երկարաժամկետ, արդարացի և կայուն եկամուտների ապահովում:<br>▸ Մեր կողմից ընտրված սեգմենտներում բանկի առաջատար դիրքերի ապահովում:<br>▸ Խթանող, արդարացի և հաճելի աշխատանքային միջավայրի ստեղծում: |
| **Ակտիվներ** | 108.5 միլիարդ ՀՀ դրամ 30 սեպտեմբերի 2008թ. դրությամբ |
| **Շահույթ մինչև հարկումը** | 3.5 միլիարդ ՀՀ դրամ 2008թ.-ի երեք եռամսյակների համար |
| **Ընդհանուր կապիտալ** | 14.4 միլիարդ ՀՀ դրամ 30 սեպտեմբերի 2008թ. դրությամբ |
| **Մասնաճյուղեր** | Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն ունի 10 մասնաճյուղ և 43 բանկոմատ Երևանում: Բանկը տիրապետում է բանկոմատների Երևանում ամենամեծ ցանցին: |
| **Աշխատակիցներ** | 415 աշխատակից |
| **Հաճախորդներ** | 51,000-ից ավելի ֆիզիկական անձ և 4,400-ից ավելի իրավաբանական անձ հաճախորդներ |
| **Ծառայություններ** | Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն առաջարկում է բազմատեսակ ծառայություններ անհատ և իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդներին` Հայաստանում և նրա սահմաններից դուրս, ներառյալ ընթացիկ և խնայողական հաշիվներ, ժամկետային ավանդներ, հիփոթեքային, ավտոմեքենայի ձեռքբերման, սպառողական վարկեր, կրեդիտ և բանկոմատային քարտեր, անհատական պահատուփեր, առևտրա-վարկային ծառայություններ, արժեթղթերի շուկայում պահառուական և բրոքերային ծառայություններ: Բանկն առաջատար դիրքեր է զբաղեցնում արտարժույթի գործառնությունների շուկայում: |
| **Գլխավոր գրասենյակի հասցե** | Հայաստան, Երևան, Տերյան փ. 66, 0009 |
| **Կոնտակտային տվյալներ** | Հեռ: 374 10 515000, Ֆաքս: 374 10 515001,<br>էլ հասցե: hsbc.armenia@hsbc.com |
| **Ինտերնետային կայք** | www.hsbc.am |

## Վերջին ժամանակաշրջանի մրցանակներ

**17 մարտի 2008թ., «Գլոբալ ֆայնենս» ամսագրի կողմից բանկը ճանաչվել է լավագույն բանկը Հայաստանում «2008թ.-ի աշխարհի զարգացող շուկաների լավագույն բանկն Ասիայում» մրցանակարգում**

Հաղթողներն ընտրվել են ակտիվների աճ, շահութաբերություն, ռազմավարական հարաբերություններ, հաճախորդների սպասարկում, մրցակցային սակագներ, ինչպես նաև նոր ծառայություններ չափանիշներով: Տարածաշրջանի և 20 երկրների զարգացող շուկաներում լավագույն բանկի ընտրությունն իրականացվել է «Գլոբալ ֆայնենս»-ի խմբագիրների, ինչպես նաև ոլորտի լավագույն վերլուծաբանների և բանկային ոլորտի խորհրդատուների կարծիքի հիման վրա: Այս բացառիկ հետազոտության արդյունքները պաշտոնապես հրապարակվել են «Գլոբալ ֆայնենս»-ի 2008թ.-ի մայիսյան համարում:

**28 նոյեմբերի 2007թ. Բանկը** “The Banker” **ամսագրի կողմից արժանացել է Հայաստանում տարվա լավագույն բանկ մրցանակին:**

**16 նոյեմբերի 2007թ. բանկը ԱրմԻնֆո-ի կողմից ճանաչվել է Հայաստանի բանկային համակարգի առաջատար:**

Հայաստանի պրոֆեսիոնալ բանկային հանրությունը Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան փբը-ն ճանաչել է երկրի բանկային համակարգի առաջատար: Այդպիսի եզրակացության են հանգել ԱրմԻնֆո գործակալության մասնագետները 19 առևտրային բանկերի 95 թոփ-մենեջերների շրջանում անցկացված հերթական մասնագիտական խաչաձև հարցման արդյունքում: Երկու տարին մեկ գործակալության կողմից անցկացվող «Լավագույն մրցակից» վարկանիշային հարցումն արտացոլում է բանկերի և դրանց ղեկավարների ընդհանրացված գնահատականը մրցակիցների՝ բանկային շուկայի մասնակիցների գործունեության որակի վերաբերյալ: Հարցումն անցկացվում է բանկային գործունեության այնպիսի ոլորտների և հատվածների վերաբերյալ, ինչպիսիք են՝ մենեջմենթի, կորպորատիվ կառավարման մակարդակը, մասնակցությունը իրական հատվածի ֆինանսավորմանը, ակտիվությունը սպառողական և հիպոթեքային վարկավորման շուկայում, արժութային շուկայում աշխատանքի մակարդակը, ակտիվությունը ֆոնդային բիզնեսի ոլորտում, աշխատանքները դրամական փոխանցումների բնագավառում, արժեթղթերի շուկայում գնահատական է տրվել նաև մրցակիցների տեխնոլոգիական զինվածության մակարդակին:

# Էյչ-Էս-Բի-Սի Խումբ

| | |
|---|---|
| **Մեր մասին** | Էյչ-Էս-Բի-Սի Խումբը աշխարհի բանկային և ֆինանսական ծառայություններ մատուցող խոշորագույն կազմակերպություններից մեկն է, որն իրականացնում է իր գործունեությունը Եվրոպայում, Ասիայում, Խաղաղօվկիանոսյան ավազանում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Մերձավոր Արևելքում և Աֆրիկայում: |
| **Գլխամասային գրասենյակ** | Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս Փի-Էլ-Սի-ն կազմավորված է Անգլիայում, և Խմբի գլխամասային գրասենյակը գտնվում է Լոնդոնում: |
| **Ռազմավարություն** | Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ռազմավարությունն ուղղված է աշխարհի տասնյակ երկրներում «Ձեր բանկն ամբողջ աշխարհում» կարգախոսի իրականացմանը: Տեղական գիտելիքների և միջազգային հասանելիության ու փորձի համակցությունը ամրապնդվում է Խմբի կայուն ֆինանսական դիրքերով: Խումբը շարունակում է իր գործունեության զարգացումը՝ ներդրումներ կատարելով արագ զարգացող շուկաներում, իսկ առավել զարգացած երկրներում՝ շեշտը դնելով միջազգային տարածում ունեցող բիզնեսների վրա: |
| **Ակտիվներ** | 2,547 միլիարդ ԱՄՆ դոլար (1,278 միլիարդ Մեծ Բրիտանիական ֆունտ, 19,864 միլիարդ Հոնկոնգի դոլար) 30 հունիսի 2008թ. դրությամբ |
| **Շահույթ մինչև հարկումը** | 10,247 միլիոն ԱՄՆ դոլար (5,195 միլիոն Մեծ Բրիտանիայի ֆունտ, 79,896 միլիոն Հոնկոնգի դոլար) 30 հունիսի 2008թ. դրությամբ |
| **Կապիտալ** | Առաջնային կապիտալի ցուցանիշ՝ 8.8% 30 հունիսի 2008թ. դրությամբ<br>Ընդհանուր կապիտալի ցուցանիշ՝ 11.9% 30 հունիսի 2008թ. դրությամբ |
| **Գրասենյակներ** | Մոտ 9,500 գրասենյակներ աշխարհի 85 երկրներում և տարածքներում |
| **Աշխատակիցներ** | 335,000 աշխատակիցներ ամբողջ աշխարհում |
| **Հաճախորդներ** | Մոտ 100 միլիոն ամբողջ աշխարհում, որոնցից մոտ 45 միլիոնը օգտվում են ինտերնետային բանկային ծառայություններից |
| **Բաժնետոմսերի գնանշումներ** | Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս փի-էլ-սի-ի բաժնետոմսերը պատկանում են ավելի քան 100 երկրներում գտնվող 200,000 բաժնետերերի և գնանշված են Լոնդոնի, Հոնկոնգի, Նյու Յորքի, Փարիզի և Բերմուդայի բորսաներում: |

| | |
|---|---|
| **Տեղեկատվական տեխնոլոգիաներ** | Էյչ-Էս-Բի-Սի խումբը առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործող է: Խմբի տարեկան ծախսը այդ ոլորտում հասնում է 5.9 միլիարդ ԱՄՆ դոլարի: Խմբի էլեկտրոնային ծառայությունները ներառում են ինտերնետային, համակարգչային և հեռախոսային բանկային ծառայություններ: Էյչ-Էս-Բի-Սի խումբն օգտագործում և սպասարկում է կայքի իր սեփական ցանցը՝ իր հաճախորդներին և աշխատակիցներին էլեկտրոնային ծառայությունների մատուցումն ապահովելու նպատակով: Այդ ցանցը աշխարհում խոշորագույններից մեկն է նմանատիպ ցանցերի շարքում: Խմբի ինտերնետային կայքերի այցելությունների թիվը 2008թ. 1 կիսամյակի ընթացքում հասել է 726 միլիոնի: |
| **Հաճախորդների խմբեր**<br>*Անհատական ֆինանսական ծառայություններ (ներառյալ սպառողական վարկավորում)* | Էյչ-Էս-Բի-Սի խումբն իր ֆիզիկական անձ հաճախորդներին աշխարհով մեկ տրամադրում է բազմատեսակ ծառայություններ, ներառյալ՝ ընթացիկ և խնայողական հաշիվներ, հիփոթեքային, սպառողական և այլ վարկեր, ապահովագրական ծառայություններ, կրեդիտ քարտեր, կենսաթոշակային և ներդրումային գործիքներ: |
| *Առևտրավարկային ծառայություններ* | Էյչ-Էս-Բի-Սի խումբը առաջատար դիրքեր է զբաղեցնում փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական ծառայություններ մատուցելու ոլորտում: |
| *Կորպորատիվ և ֆինանսական շուկաներում ծառայություններ* | Էյչ-Էս-Բի-Սի խումբը բազմատեսակ ծառայություններ է մատուցում աշխարհի խոշորագույն կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին ու կառավարություններին: |
| *Պրայվիթ Բենկինգ (Private Banking)* | Էյչ-Էս-Բի-Սի խումբը պրայվիթ բենկինգ (Private Banking) ծառայություններ մատուցող առաջատար կազմակերպություններից մեկն է, որը խոշոր անձնական կարողության տիրապետող հաճախորդներին և նրանց ընտանիքներին ծառայություններ է մատուցում աշխարհի 96 երկրներում և տարածքներում: |
| **Կոնտակտային տվյալներ** | Լոնդոն՝ 44 020 7992 3756 / 44 020 7992 1573<br>Հոնկոնգ՝ 852 2822 4929<br>Նյու Յորք՝ 1 212 525 3800;<br>Չիկագո՝ 1 224 544 3310 |
| **Ինտերնետային կայք** | www.hsbc.com |

## Վարկանիշեր

| | | Մուդիս | Ս էնդ Փի | Ֆիթչ | Դի-Բի-Առ-էս |
|---|---|---|---|---|---|
| **Էյչ-Էս-Բի-Սի Յոլդինգս փի-էլ-սի** | Երկարաժամկետ | Aa2 | AA- | AA | AA (բարձր) |
| | Կարճաժամկետ | P-1 | A-1+ | F1+ | R-1 (բարձր) |

## Վերջին ժամանակաշրջանի մրցանակներ



**11 հուլիսի 2008 թ., Էյչ-Էս-Բի-Սի-ն առաջինն է աշխարհի առաջատար բանկերի ցանկում**

Էյչ-Էս-Բի-Սի-ին երրորդ տեղից տեղափոխվել է առաջին տեղ՝ գլխավորելով Աշխարհի լավագույն 1000 բանկերի ցանկը «The Banker» ամսագրի տարեկան հետազոտության արդյունքներով: 1999թ-ից ի վեր Էյչ-Էս-Բի-Սի-ին առաջին ոչ-ամերիկյան կազմակերպությունն է, որը գլխավորում է այդ ցանկը՝ իր ընդհանուր կապիտալի եւ մինչեւ հարկումը շահույթի ցուցա-նիշներով, որոնք անցյալ տարվա տվյալներով ռեկորդային էին:



**4 ապրիլի 2008թ., Էյչ-Էս-Բի-Սի-ն գլխավորում է Forbes –ի աշխարհի 2000 խոշորագույն ընկերությունների ցանկը**

Էյչ-Էս-Բի-Սի-ն գլխավորել է 2000 խոշորագույն ընկերությունների ցանկը՝ առաջ անցնելով երկու տեղով: 2004թ.-ից ի վեր սա առաջին անգամն է, երբ ոչ-ամերիկյան ընկերությունը գլխավորում է այս ցանկը: Տարեկան հետազոտությունը ներառել է 26 ոլորտներում և 60 երկրներում գործող կազմակերպությունների շրջանառության, շահույթների, ակտիվների և շուկայական արժեքի ուսումնասիրություն: Էյչ-Էս-Բի-Սի-ն բանկային ոլորտի 5 լավագույն կազմակերպություններից մեկն է, որն ապահովել է միջին տարեկան կտրվածքով 26%-ով եկամուտների և 31%-ով զուտ շահույթի աճ վերջին 5 տարիների ընթացքում:

HSBC
Ձեր բանկն ամբողջ աշխարհում

**18 փետրվարի 2008թ., Էյչ-Էս-Բի-Սի-ն առաջինն է աշխարհի առավել արժեքավոր բանկային ապրանքանիշերի ցանկում**

Էյչ-Էս-Բի-Սի–ն՝ Եվրոպայի խոշորագույն բանկն իր շուկայական արժեքով, ճանաչվել է աշխարհի առավել արժեքավոր բանկային ապրանքանիշը խոշորագույն ֆինանսական ապրանքանիշեր ցանկում՝ համաձայն The Banker ամսագրի: Խումբը նաև արժանացել է առավելագույն երեք “A” վարկանիշի: Էյչ-Էս-Բի-Սի Խմբի մարքեթինգի ղեկավար Քրիս Կլարկը նշեց. «Ընդամենը 10 տարում HSBC ապրանքանիշը դարձավ շատ հզոր ակտիվ: Զարգացող շուկաներում մեր գործունեության հաջողությունը ամրապնդված կլինի մեր ապրանքանիշի հզորությամբ: Մեր հաճախորդներից շատերը աճող հետաքրքրություն են ցուցաբերում միջազգային տարածում ունեցող ծառայությունների: Մենք շատ լավ հնարավորություն ունենք այդ ծառայությունները մատուցել մեր հաճախորդներին և մեր հզոր ապրանքանիշը շատ օգնում է այդ գործում»:

# Վերլուծական տեղեկատվություն

## Հայաստանի Հանրապետություն – Տնտեսության և բանկային համակարգի հիմնական ցուցանիշներ

### Հիմնական մակրո-տնտեսական ցուցանիշներ

| Էկոնոմիկա և ֆինանսներ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008(p) |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՆԱ (ԱՄՆ դոլար միլիարդ) | 2.4 | 2.8 | 3.6 | 4.9 | 6.4 | 9.1 | 10.8 |
| ՀՆԱ իրական աճ % | 13.2 | 14.0 | 10.5 | 13.9 | 13.3 | 13.7 | 10.0 |
| Գնաճ % | 2 | 8.6 | 2 | -0.2 | 5.2 | 6.6 | 4±1.5 |
| Համախառն ներքին խնայողություններ (% ՀՆԱ-ից) | 4.3 | 6.4 | 9.9 | 16.1 | 17.7 | 14.7 | - |
| Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (% ՀՆԱ-ից) | -6.2 | -6.7 | -0.5 | -1.8 | -1.8 | -6.2 | - |

| Արտաքին ակտիվներ և պարտավորություններ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---|---|---|---|---|---|---|
| Արտաքին պարտք (ԱՄՆ դոլար միլիարդ) | 1.0 | 1.1 | 1.2 | 1.1 | 1.2 | 1.4 |
| Արտաքին պարտք (% ՀՆԱ-ից) | 43.2 | 39.1 | 33.1 | 22.4 | 18.9 | 15.8 |
| Միջազգային պահուստներ (ԱՄՆ դոլար միլիարդ) | 0.4 | 0.5 | 0.6 | 0.8 | 1.1 | 1.8 |

- Նշանակալից մակրոտնտեսական աճ
- Տարեկան իրական տնտեսական աճը 2002-2007 ժամանակաշրջանում կազմել է միջինում 13.1%՝ աճելով 5.9%-ից 2000թ. մինչև 13.8% 2007թ.
- Տարեկան գնաճը 2002-2007 ժամանակաշրջանում կազմել է միջինում 4.1%
- Ֆիտչ վարկանիշ – BB, Հեռանկար – «Կայուն»

## Վարկանիշ

### Ուժեղ կողմեր

- Կայուն տնտեսական քաղաքականություն
- Արագ աճ
- Պետական պարտքի ցածր մակարդակ
- Աճող միջազգային պահուստներ և արտաքին հրացվելիություն

### Թույլ կողմեր

- Մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցածր մակարդակ
- Հարկային եկամուտների ցածր մակարդակ ՀՆԱ-ի մեջ
- Փոքր և դոլարիզացված ֆինանսական հատված
- Դժվար աշխարհաքաղաքական միջավայր

## Հայաստանի բանկային համակարգ

### Ընդհանուր տեղեկատվություն

- ՀՀ տնտեսության առավել զարգացած ճյուղերից մեկը, որը միջազգայնորեն ճանաչված է որպես տարածաշրջանի զարգացած համակարգերից մեկը
- Տարիների ընթացքում տեղի է ունեցել համակարգի համախմբում, զարգացում և կայունացում
- Ներկայումս Հայաստանում գործում են 22 բանկեր
- Ֆինանսական կարգապահությունը ուժեղ է, ինչը պայմանավորված է ուժեղ և կայուն վերահսկողությամբ
- Համակարգը շարժվում է դեպի ռիսկի հիման վրա իրականացվող վերահսկողության՝ բանկերին շահագրգռելով ավելի պատասխանատու աշխատանք դրսեվորելուն

### Հայաստանի բանկային համակարգի ամփոփ ցուցանիշներ

- Ընդհանուր ակտիվներ – 967 միլիարդ ՀՀ դրամ 30 սեպտեմբերի 2008թ.-ի դրությամբ
- Ընդհանուր կապիտալ – 217 միլիարդ ՀՀ դրամ 30 սեպտեմբերի 2008թ.-ի դրությամբ
- Հաճախորդների ավանդներ – 526 միլիարդ ՀՀ դրամ 30 սեպտեմբերի 2008թ.-ի դրությամբ
- Հաճախորդներին տրված վարկեր – 608 միլիարդ ՀՀ դրամ 30 սեպտեմբերի 2008թ.-ի դրությամբ

# Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն

## Մատուցվող ծառայություններ

- Ընթացիկ և խնայողական հաշիվներ, ժամկետային ավանդներ
- Փոխանցումներ, կանխիկով և չեկերով գործառնություններ
- Առևտրային (բիզնես) վարկեր
- Առևտրային ծառայություններ
- Աշխատավարձային հաշիվների վարում
- HSBC*net* - էլեկտրոնային բանկային ծառայություններ
- Ֆիզիկական անձանց վարկավորում, ներառյալ հիփոթեքային, ավտոմեքենայի ձեռքբերման, անշարժ գույքի կառուցման և վերանորոգման, սպառողական վարկեր
- Կրեդիտ և բանկոմատային քարտեր
- Անհատական պահատեղեր
- Արտարժույթի փոխանակում, ներառյալ ֆորվարդային պայմանագրեր
- Պահառուական և բրոքերային ծառայություններ արժեթղթերի շուկայում

## Ֆինանսական տեղեկատվություն և բանկի մասնաբաժինը Հայաստանի բանկային համակարգում

- Բանկի հաշվեկշռային հիմնական ցուցանիշների աճի դինամիկան












## Մինչև հարկումը շահույթի աճի դինամիկան




## Բանկի մասնաբաժինը Հայաստանի բանկային համակարգում 30 սեպտեմբերի 2008թ.-ի դրությամբ



## Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Բանկի հիմնական ռիսկերը կապված են շուկայական ռիսկի հետ, որը ներառում է տոկոսադրույքի և արտարժույթի ռիսկերը, ինչպես նաև վարկային և իրացվելիության ռիսկերի հետ.

### Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Բանկի Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման համար:
Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը կառավարվում և վերահսկվում են Ակտիվների ու պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից՝ թե՛ ընդհանուր պորտֆելի և թե՛ առանձին գործարքների մակարդակով:

### Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Բանկի հանդեպ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ հաշվեկշռային և թե՛ արտահաշվեկշռային) կառավարելու համար: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից: Բանկի վարկային քաղաքականությունը համապատասխանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին և ՀՀ օրենսդրության պահանջներին:

Բանկի վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,

- ապահովագրական ընկերությունների գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերը ներկայացումը,
- վարկերի/այլ վարկային գործիքների և գրավի շարունակական վերահսկման ընթացակարգերը:

**Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը կապված է շուկայական գների տատանման հետ, ինչը ներառում է արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գների տատանումները, որոնք ազդում են Բանկի եկամուտների կամ նրա ակտիվների վրա: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի ռիսկերը և գնային ռիսկը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և կապիտալի ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք հակված են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխությունների ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:
Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը համապատասխան սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Բանկը շուկայական ռիսկը կառավարում է սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքի մարման ժամկետների ճեղքվածքների և արժութային դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում և վերանայվում են: Բանկի շուկայական ռիսկի քաղաքականությունը համապատասխանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին և ՀՀ օրենսդրության պահանջներին:

- Արտարժույթի ռիսկ
  Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Բանկը կառավարում է իր արտարժույթի ռիսկը՝ սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր ֆինանսական գործիքների և արժութային դիրքերի գծով:
- Տոկոսադրույքի ռիսկ
  Տոկոսադրույքի ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը

ենթարկված է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված պարտավորություններից:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման և վերահսկման համար Բանկը կիրառում է Present Value of Basis Point հաշվարկի մեխանիզմը, որն արտահայտում է տոկոսադրույքի դիրքի ներկա արժեքի փոփոխությունը վերջինիս հաշվարկն իրականացնելիս կիրառվող տոկոսադրույքի մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում: Բանկը կառավարում է իր տոկոսադրույքի ռիսկը՝ սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր տոկոսադրույքի մարման ժամկետների ճեղքվածքների գծով ըստ արժույթի տեսակների, ըստ մարման ժամկետների, ինչպես նաև առանձին առևտրային և ընդհանուր պորտֆելների գծով:

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Բանկը կհանդիպի դժվարությունների՝ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ու տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է ֆինանսական հաստատությունների, ներառյալ Բանկի կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական հաստատությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և վերջիններիս հետ կապված որոշակի անորոշությամբ: Դա հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:
Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի քաղաքականությունը համապատասխանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի ստանդարտներին և ՀՀ օրենսդրության պահանջներին:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արժույթների և դրամական միջոցների, հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես պաշտպանություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման պահուստային վերականգնողական ծրագրի մշակում
- իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում օրենսդրական և Էյչ-Էս-Բի-Սի Խմբի պահանջների նկատմամբ:

# Ինչո՞ւ ներդնել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերում



## Պատասխանատվության սահմանափակում

Ներկայացված նյութը հակիրճ նկարագրում է պարտատոմսերի թողարկման պայմանները և պարունակում է տեղեկատվություն միջավայրի թողարկողի վերաբերյալ: Հիմնական պայմանները, ինչպես նաև թողարկողի ֆինանսական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասնորեն ներկայացված են արժեթղթերի հրապարակային առաջարկի Ազդագրում, որը գրանցված է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Պարտատոմսերում ներդրման որոշում կայացնելիս՝ ներդրողները պետք է ծանոթանան պարտատոմսերի Ազդագրի հետ:

Բոլոր գնահատականները և կանխատեսումները հետագա իրադարձությունների և/կամ գործողությունների, տնտեսության զարգացման և/կամ թողարկողի գործունեության արդյունքների վերաբերյալ արտահայտում են թողարկողի կարծիքը՝ հրապարակման օրվա դրությամբ: Չնայած թողարկողը հավատացած է, որ գնահատականների և կանխատեսումների հիմքում ընկած դատողությունները իրատեսական են, դրանք կարող են տեղի չունենալ: